

Հավելված 2

ՀՀ առողջապահության նախարարի

2017 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 2930 – Ա հրամանի

ԿՆՀ-Ի ԵՆԹԱԴՐՎՈՂ ԱԽՏԱՀԱՐՈՒՄՆԵՐՈՎ ՄԻԱՎ ՎԱՐԱԿՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Սույն ընթացակարգի նպատակն է բժշկական կազմակերպություններում արդյունավետ կազմակերպել բուժաշխատողների կողմից ՄԻԱՎ վարակով պացիենտների վարումը ԿՆՀ-ի ենթադրվող ախտահարումների ժամանակ: ՄԻԱՎ վարակով պացիենտների մոտ ԿՆՀ-ի ենթադրվող ախտահարումների ժամանակ բժիշկը պետք է հետևի գործունեության ընթացակարգի ստորև ներկայացվող քայլերին:

1. Պացիենտի վիճակի գնահատում և հիվանդության պատմության

հավաքագրում

- Գնահատել պացիենտի նյարդաբանական վիճակը:
- Հավաքագրել հիվանդության հակիրճ պատմություն:
- Ճշտել, երբ է սկսվել վիճակի ներկայիս վատթարացումը:
- Կլինիկական ախտանշանների, հիվանդության պատմության հիման վրա տարբերակիչ ախտորոշում անցկացնել ՄԻԱՎ վարակով չպայմանավորված վիճակների և հիվանդությունների միջև:


2. Բուժօգնության իրականացում, առաջնահերթ կենսական կարևոր ֆունկցիաների ապահովում

3. Գործիքային հետազոտությունների կատարում (գլխուղեղի ՀՏ, ՄՌՏ):

ՄԻԱՎ վարակով պայմանավորված ԿՆՀ-ի ախտահարումների ժամանակ ավելի ինֆորմատիվ է գլխուղեղի ՄՌՏ հետազոտությունը ներերակային կոնտրաստով, ՕՀ տարբերակիչ ախտորոշման անհրաժեշտության դեպքում կատարել սերոլոգիական քննություն: Այլ գործիքային հետազոտությունների կատարումը նյարդաբանի ցուցումներով ըստ անհրաժեշտության:

4. Հակացուցումների բացակայության դեպքում կատարել լումբալ պունկցիա: Հետագա քայլերն ըստ սխեմայի:

ԱԼԳՈՐԻԹՄ



5. Փաստաթղթավարություն

- 1) Կատարել պատշաճ գրանցումներ պացիենտի վիճակի, առաջնային զննման, կատարված հետազոտությունների, տրամադրված բուժօգնության, նեղ մասնագետների խորհրդատվությունների վերաբերյալ:
- 2) Բարդ, իրարամերժ իրավիճակներում կազմակերպել ԶԻԱՀ-ի ԿՀԿ-ի մասնագետի լրացուցիչ խորհրդատվություն:

6. Հապավումներ

ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարության վիրուս
ԿՆՀ	կենտրոնական նյարդային համակարգ
ԶԻԱՀ-ի ԿՀԿ	ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն
ՀՏ	համակարգչային տոմոգրաֆիա
ՄՌՏ	մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա
ԷԼԳ	էլեկտրոէնցեֆալոգրաֆիա
ՊՇՌ	պոլիմերազային շղթայական ռեակցիա
ՕՀ	օպորտունիստական հիվանդություն
ՀՌՎ	հակառետրովիրուսային

Գործունեության ընթացակարգի մշակման աշխատանքային խմբի անդամների անվանացուցակ

1. Ս.Գրիգորյան՝ «Ա ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր, «Ա ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ Ազգային համալսարանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի «ՄԻԱՎ վարակ» դասընթացի գիտական դեկան»
2. «Մանգոյան՝ «Վարդանանց» ՆԲԿ-ի տնօրեն, բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի շարունակական բժշկական կրթության ֆակուլտետի անէսթեզիոնգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի ղոցենտ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի գիտական դեկան, կլինիկական ուղեցույցների և պացիենտի վարման գործելակարգերի ներդրման նպատակով առաջարկներ մշակող հանձնաժողովի նախագահ
3. Ա.Ղազարյան՝ թիվ 2 բուժմիավորման նյարդաբանական բաժանմունքի վարիչ, բ.գ.թ.:
4. Ա.Պեպանյան՝ «Արմենիկում» կլինիկական կենտրոն, բժիշկ-վարակաբան:

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Ընթացակարգը մշակվել է առանց որևէ ֆինանսական աջակցության: Աշխատանքային խմբի անդամները միմյանց կամ որևէ կազմակերպության հանդեպ շահերի բախում չունեն:

Ընորհակալական խոսք

1. Ա.Պապոյան՝ բժիշկ-համաճարակաբան, ԶԻԱՀ-ի ԿՀԿ-ի համաճարակաբանական հսկողության բաժնի վարիչ
2. Ժ.Պետրոսյան՝ բժիշկ-համաճարակաբան, ԶԻԱՀ-ի ԿՀԿ-ի կանխարգելման բաժնի վարիչ
3. Հ.Հովակիմյան՝ բժիշկ-վարակաբան, ԶԻԱՀ ԿՀԿ
4. Ե.Սիլկա՝ բժիշկ-վարակաբան, ԶԻԱՀ ԿՀԿ:

Գրականության ցանկ՝

1. Հակառետրովիրուսային դեղերի կիրառմամբ ՄԻԱՎ վարակի բուժման և կանխարգելման կլինիկական ուղեցույց, ՀՀ ԱՆ 07.08.17թ. N 2429-Ա հրաման:
2. Джон Бартлетт, Джоэл Галлант, Пол Фам. Клинические аспекты ВИЧ-инфекции. 2012.
3. Consolidated guidelines on the use of antiretroviral drugs for treating and preventing HIV infection: recommendations for a public health approach – 2nd ed. World Health Organization; 2016.
4. C.Hoffmann et J.K.Rockstroh HIV/2014/15 www.hivbuch.de.